Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի երգ-երաժշտության (2 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), հասարակագիտության (6 դասաժամ), բնագիտության (4 դասաժամ), քիմիայի (11 դասաժամ), մաթեմատիկայի (12 դասաժամ), ֆիզիկայի (3 դասաժամ), կենսաբանության (11 դասաժամ), տեխնոլոգիայի տղաների խումբ (4 դասաժամ), մայրենիի (13 դասաժամ) թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են **դեկտեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 28-ը ներառյալ,** ամեն օր՝ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. հունվարի 3-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Լոռու մարզի Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ Լոռու մարզ, գ. Կաթնաղբյուր, 8-րդ փ, 1-ին նրբ., 5 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել (077)78-91-96 հեռախոսահամարով: